

ԲՆԱՇԽԱՐՀՆ ԱՐՏԱՑՈԼՈՂ ԴԱՐՁԿԱԾԱՅԻՆ
ՄԻԱԿՈՐՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

«Դարձվածաբանությունը լեզվի անկապտելի բաժինն է և նրա հարստության վկայություններից մեկը: Այն գոյություն ունի լեզվի բառապաշարի հետ մեկտեղ իբրև դարերի ընթացքում ձևավորված և դարերի բովով անցած լեզվի կառուցվածքային տարր, չնույնանալով ոչ բառազանձին և ոչ էլ պատրաստի լեզվական ու խոսքային մյուս տարրերին: Իրենց կառուցվածքային ու իմաստաբանական առանձնահատկություններով դարձվածները մի առանձին շերտ են կազմում լեզվում և լեզվի համակարգում գրավում յուրահատուկ տեղ» (Մելքունյան Մ., Պոդոսյան Պ., 1975: VII):

Դարձվածը երկու կամ ավելի բառերի կայուն կապակցությունն է, որն արտահայտում է մեկ գաղափար և ունենում է փոխաբերական իմաստ: Փոխաբերական իմաստ ունեցող բառերից այն տարբերվում է նրանով, որ բառերի կապակցությունն ամբողջությամբ է արտահայտում փոխաբերական իմաստ, այլ ոչ թե բաղադրիչներն առանձին:

Այսպիսով, դարձվածները սեղմ և պատկերավոր ասույթներ են, որոնք արտահայտում են ժողովրդի բարքերը, ավանդույթները և կենցաղի բազմազան երևույթները: Դրանք ճանաչողական մեծ արժեք ունեն և բավականին հարուստ նյութ են տալիս տվյալ ժողովրդի պատմության, աշխարհայացքի և նույնիսկ հոգեբանության մասին: «Քիչ խոսքով շատ բան ասելու բացառիկ ուժը, պարզությունը, կոնկրետությունը, պատկերավորությունը, բնութագրումների դիպուկությունը և գունագեղությունը նրանց բնորոշ առանձնահատկություններից են» (Ղանալանյան 1951: IX):

Կիրառելով բանաստեղծական պատկերավոր խոսքի բազմազան և հարուստ միջոցները (փոխաբերություն, անձնավորում, փոխանունություն, մակդիր և այլն) ժողովուրդը դրանով իսկ կրկնապատկում է դարձվածային միավորների (այսուհետ՝ ԴԱ-ներ) հուզական ներգործության ուժը, ընդգծում և առավել ցայտում է դարձնում նրանց բովանդակությունը: Կենդանական աշխարհից, բնությունից վերցված օրինակների, համեմատությունների, նմանությունների, փոխաբերությունների, զուգադրությունների, հակադրությունների միջոցով բացահայտվում և զնախատվում են մարդկային հասարակական կյանքի երևույթները, սոցիալական, տնտեսական, քաղաքական, կենցաղային և

իրավական հարաբերությունները, տրվում են դրանց ճշմարտացի բնութագիրն ու գնահատականը:

ԴՄ-ների շարքում զգալի տեղ են գրավում մարդկային մարմնի մասեր պարունակող դարձվածները, և դա կարելի է բացատրել նրանով, որ մարդ արարածը հենց իրենով, իր օրգանիզմով, իր զգայարաններով ու զգայություններով է կապվում աշխարհի հետ և դրանցով էլ ընկալում է իրեն շրջապատող իրականությունն ու երևույթները: Սակայն, դարձվածային միավորներ կազմող բառերի մեջ կարելի է առանձնացնել նաև այնպիսի իմատային դաշտեր, ինչպիսիք են կենդանական աշխարհը (*հավի խելք, առյուծի սիրտ*), կենցաղային առարկաները (*ասեղ գցելու տեղ չկա, սեղան բացել, դռներն ընկնել*), վերացական հասկացությունները (*կյանքի գնով, խոսքը կտուրը գցել*) և այլն: Դարձվածների մեջ հասարակական, կենցաղային որևէ երևույթ, հարաբերություն, բարոյական, փիլիսոփայական որևէ միտք բացահայտելու համար ժողովուրդն հաճախ դիմում է նաև բնությանը և շրջապատող միջավայրին: Թե հայերեն, և թե անգլերեն ԴՄ-ներում լայնորեն և բազմակողմանիորեն արտացոլված է բնաշխարհը: ԴՄ-ների ատաղծ են դառնում լեռներն ու ձորերը, սարերն ու անտառները, ծովերն ու լճերը, գետերն ու առուները, դաշտն ու արոտը:

Բնաշխարհին արտացոլող ԴՄ-ները անգլերենում և հայերենում հանդես են բերում ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Թե անգլերենում, և թե հայերենում մեծ թիվ են կազմում հատկապես «ծով/sea», «սար կամ լեռ/mountain» և «գետ/river» բաղադրիչները պարունակող դարձվածային միավորները: Երկու լեզուներում էլ առավել փոքրաթիվ են «լիճ/lake,pond», «առու/brook», «բլուր/hill», «ձոր/chasm», «օվկիանոս/ocean» բաղադրիչները պարունակող ԴՄ-ները: Իսկ այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝ սարահարթ, հարթավայր, դաշտավայր, նեղուց, ծովածոց և նմանատիպ այլ անվանումներ, անգլերեն և հայերեն դարձվածներում տեղ չեն գտել:

Բնաշխարհին արտացոլող ԴՄ-ները անգլերենում և հայերենում կարելի է բաժանել որոշակի խմբերի՝

ա) ԴՄ-ներ, որոնք թե հայերենում, թե անգլերենում նույնն են ինչպես արտահայտության եղանակով, այնպես էլ արտահայտած իմաստով, թեպետ դրանք քանակով փոքրաթիվ են: Օրինակ՝ *follow the river and you will get to the sea-գետով գնա, ծով դուրս կգաս, to sail the seven seas-յոթ ծով նավարկել; wish sb at the bottom of the sea-երանի ծովի տակին լինել; cross the stream where it is the shallowest-գետն անցիր ամենաձանձաղ տեղից; the river past and God forgotten-գետն անցավ, «Սուրբ Աստված» մոռացավ; the stream cannot rise above its source-գետն իր ակնից վեր չի բարձրանա; the morning to the*

mountain, the evening to the fountain-առավոտյան դեպի սարը, երեկոյան դեպի աղբյուրը; a drop in the ocean-կաթիլ ծովում և այլն:

բ) ԴՄ-ներ, որոնք արտահայտում են նույն իմաստը, սակայն արտահայտության եղանակը որոշակի տարբերություններ է դրսևորում երկու լեզուներում: Օրինակ՝ if the mountain will not come to Mohamet, Mohamet must go to the mountain-եթե մարդը չգնա սարի մոտ, սարը կգա մարդու մոտ; there are as good fish in the sea as ever came out of it-ինչքան էլ հանես, ծովում էլի այդքան ծուկ կմնա; even the wearest river winds somewhere to sea-նույնիսկ ամենափոքր գետը ծով է հասնում; don't swap horses when crossing the river-գետի մեջտեղը ձիերը չեն փոխում, do not roll up your trousers before reaching the stream-առուն չթռած՝ հոպ մի արա / ջուրը չտեսած մի բոբիկացիր; the mountain has brought forth a mouse-լեռը երկնեց՝ մուկ ծնեց; friends may meet, but mountains never-sարը սարին չի հանդիպի, մարդը մարդուն կհանդիպի; not worth a hill of beans-ծովը նետիր, հետևից էլ քար գցիր և այլն:

գ) ԴՄ-ներ, որոնք արտահայտում են նույն իմաստը, սակայն միայն մի լեզվում են պարունակում բնաշխարհի տարր մատնանշող բաղադրիչը, մինչդեռ մյուս լեզվում արտահայտվում են այլ բառույթների միջոցով: Դարձվածների այս խումբն առավել մեծ թիվ է կազմում: Օրինակ՝ go for the wool and come home shorn-գնալ ծով, ծարավ հետ գալ; individual drops make the torrent-կաթիլ-կաթիլ ծով կդառնա; to crush a fly on a wheel-ծովը կրակ տալ; to eat the calf in the cows belly-ծուկը ծովում առևտուր անել; to send owls to Athens/ to carry coal to Newcastle-ծովը ջուր լցնել; beware of a silent dog and still water-մարմանդ գետից վախեցիր; Christmas comes but ones a year(but when it comes, it brings good cheer)-ամեն անգամ գետը գերան չի բերում; Bacchus has drowned more men than Neptune-գինին ավելի շատ մարդ է խեղդել քան ծովը; still waters have deep bottoms-հանդարտ գետը խոր հուն կունենա; who fears scars should not go to wars-ջրից վախեցողը գետը չի մտնի; to suffer from the swollen head-կարծում է, թե պզտիկ լեռներն ինքն է ստեղծել; make a mountain out of a mole-hill-լուծ ուղտ դարձնել և այլն:

դ) ԴՄ-ներ, որոնք չունեն իրենց համարժեք դարձվածը զուգադրվող լեզվում: Օրինակ՝ at sea(չփոթված, հուզված); go to sea(նավաստի դառնալ); as old as the hills(շատ ծեր); գետի երեսին ընկած տաշեղ(անգոր, անօգնական, բախտի քմահաճույքին ենթարկված); գետը գցել(ոչնչացնել); գետատար լինել(անտեղի գոհ գնալ); սարեսար ընկնել(շատ չարչարվել); a big fish/frog in a small pond(փոքր խմբի ամենաազդեցիկ մարդը) և այլն:

Դարձվածներն արտացոլում են տվյալ ժողովրդի կյանքն ու մշակույթը, ավանդույթները, սովորույթները, բարքերը և ամենակարևորը՝ տվյալ ժողովրդի լեզվամտածողությունը, ուստի յուրաքանչյուր լեզվի դարձվածաբանությունն աչքի է ընկնում ազգային ինքնատիպությամբ: Պատահական չէ, որ հայերենում մեծ թիվ են կազմում «սար» բառույթը պարունակող դարձվածային միավորները, ընդ որում սարը բնորոշվում է որպես ուժի, հզորության, պաշտպանի խորհրդանիշ (*սարեր շուռ տալ*, *սարի չափ*, *սարի պես մեջքին կանգնած լինել*) և իմաստային ընդարձակմամբ օգտագործվում է անգամ *աշխարհի* իմաստով՝ *սարերով մեկ դառնալ*=*աշխարհով մեկ դառնալ*: Անգլերենում *սարը* կամ *լեռը* (mountain) հիմնականում ունի դժվարություն, խոչընդոտ իմաստը՝ *a mountain to climb-a serious or considerable difficulty or obstruction to overcome*: *Լեռներն* ու *սարերը* հաճախ են հիշատակվում հայ ժողովրդի մտաշխարհում, նրա բանավոր ստեղծագործություններում և մասնավորապես՝ դարձվածներում և թևավոր խոսքերում (*«Սար գնացինք՝ սարսուռ տարանք, դաշտ գնացինք՝ թրթուրը կերանք»*, *«Սար պիտի փլչի, որ ծոր լցվի»*, *«Սարերու տեղակ ծորերն են ծեն տալիս»* և այլն): Մերկացնելու համար հոգևորականների ծայր աստիճան ազաիությունն ու որկրամոլությունը՝ հայ ժողովուրդն ասում է. *«Սար ու ծոր՝ տերտերի փող»*: *«Զոր»* և *«փոր»* բառերն այստեղ կապակցվում են ոչ միայն նրանց մեջ առկա *-որ* հնչյունակապակցությունների նմանությամբ, այլև իմաստային նմանությամբ՝ քահանայի փորը ժողովրդի հայացքով նույնպիսի մի խոռոչ է, ինչպես և սովորական ծորը, որը դժվարությամբ է լցվում (տես՝ Ղանալանյան 1951: LXV):

Մասին սարի հանդեպ ունեցած հայ ժողովրդի հիացմունքն ու պարծանքը ես տեղ է գտել ՂՄ-ներում՝ *«Ամեն փետ շերեփ չի լինի, ամեն սար՝ Մասիս»*, որտեղ Մասիս սարի ինքնատիպ ու բուն հայկական պատկերի միջոցով ակնարկվում է այն միտքը, որ կան այնպիսի բարձունքներ, որոնց չի կարող հասնել սովորական մեկը:

Եթե հայերեն դարձվածներում առատությունն ու լիությունն արտահայտվում է *«ծով»* բառույթի միջոցով (*խմիչքը ծով է*, *խելքի ծով*, *մտքի ծով*, *արյան ծով*), ապա անգլերենում առատության հատկանիշն արտահայտում են *mountain* և *ocean* բառույթները (*a mountain of flesh*, *an ocean of sth*): Դա կարելի է բացատրել թերևս նրանով, որ մեզ՝ հայերիս բաժին ընկած խոչորագույն ջրային տարածքը ծովն է, ուստի առատություն և լիություն արտահայտելու համար իբրև համեմատություն դիտվել է ծովը:

Մշակութային երանգավորում ունի նաև *river* (*գետ*) բառույթը: Ամերիկյան դարձվածներում այն զուգորդվում է ստրկության հետ, քանզի Միսիսիպի գետի

ափին էր տեղի ունենում ստորուկների առք ու վաճառքը կամ նրանց փոխանակումը ապրանքով: Այստեղից էլ՝ *sell somebody down the river*(անարդար վերաբերմունք ցուցաբերել մեկի հանդեպ, ում խոստացել ես օգնել); *send somebody up the river*(ձերբակալել); *up the river*(քանտում); *go down the river*(վաճառվել դեպի հարավ՝ որպես ստրուկ) և այլն:

Այսպիսով, բնաշխարհը ևս կարելի է դիտել որպես ժողովրդի լեզվամտածողությունը բացահայտող տարր: Այն դարձվածային միավորները, որոնցում տեղ է գտել բնաշխարհը, ունենալով ճանաչողական մեծ արժեք, արտացոլում են մեկ տվյալ ժողովրդի պատմությունը, աշխարհայացքը, բարքերն ու կենցաղը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս., Դարձվածք: Դարձվածաբանություն, ՀԱՅ, հ.3, Ե., 1977:
2. Բեդիրյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները (կառուցվածքային վերլուծություն), Ե., 1986:
3. Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973:
4. Գևորգյան Ե., Հայոց լեզվի դարձվածքները, Ե., 1969:
5. Քոսյան Վ., Դարձվածաբանություն (Զահուկյան Գ., Աղայան Եղ., Սոաքեյան Վ., Հայոց լեզու, 1-ին մաս, արակ Ա), «Լույս», 1980:
6. Кунин А.В., Основные понятия английской фразеологии как лингвистической дисциплины и создание англо-русского фразеологического словаря, Москва, 1964:

ԲԱՆՈՒՄԱՆՆԵՐ

1. Բեդիրյան Պ. Ս., Դարձվածաբանական բացատրական բառարան (դպրոցական համառոտ) «Լույս հրատ», Երևան, 1971:
2. Դանալանյան Ս., Առածանի, ԳԱ հրատ., Երևան, 1960:
3. Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան(խմբ. Մելքունյան Ս., Պողոսյան Պ.), Երևան, 1975:
4. Սահակյան Վ.Ա., Սահակյան Վ.Վ., Դարձվածքներ և թևավոր խոսքեր, «ՎՄՎ-Պրինտ» հրատ., Երևան, 2002:
5. Սեֆերյան Ս., Լազարյան Ա., Իմաստախոս ժողովուրդը(անգլերեն-հայերեն ասացվածքներ պատկերավոր արտահայտություններ), «Սահակ Պարթև» հրատ., Երևան, 1992:
6. Սուքիասյան Ա. Ս., Գալստյան Ս.Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևանի համալս. հրատ., 1975:
7. Кунин А.В., Англо-русский фразеологический словарь / Лит. Ред.М.Д. Литвинова/. 4-ое изд. Переаб. и доп.-М.,Русский язык, 1984: